# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Ձ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00, meghri.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2019թվականի N 326

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌՈՒԶԱՆՆԱ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մաս 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարներ մասին» օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 200 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնք ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը, Ռուզաննա Ամիրխանյան համայնքի ղեկավարին ներկայացրած 2019թ. օգոստոսի 19-ի N3292-Ֆ հայտը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Անհատ ձեռնարկատեր Ռուզաննա Ամիրխանյանին (գրանցման համարը՝ 79.00980) ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Գ. Նժդեհի փողոցի թիվ 6 հասցեում գտնվող առևտրի օբյեկտում թույլատրել 2019 թվականի հուլիսի 1-ից մինչև 2019 թվականի սեպտեմբերի 30-ը զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

2019 թ. օգոստոսի 19
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

**Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք**
**ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00,**
**meghri.syuniq@mta.gov.am**

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2019թվականի N 327

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 325 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով <<Վերտեքս>> ՍՊԸ-ի կողմից տրված չափագրության արդյունքները և հաշվի առնելով Ժաննա Ստեփանյանի 2019 թվականի օգոստոսի 9-ին N 3178 Մեղրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի քաղաքապետի 1997 թվականի հունիսի 30-ի թիվ 325 որոշման 1-ին կետում կատարել փոփոխություն՝ <<բնակելի տարածքը՝ 16 քառմ., խորդանոցը՝ 12 քառմ.>> բառերը փոխարինել <<բնակելի տունը՝128 քմ, բաց պատշգամբը՝ 33 քմ, լողավազան՝ 12,5քմ և գոմը՝ 14,2քմ մակերեսներով շինությունները>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ժաննա Ստեփանյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ**

**2019թ. օգոստոսի 19**
**ք.Մեղրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00,
meghri.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 օգոստոսի 2019թվականի N 328

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՅՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերին տրամադրել՝
1) 0,13707 հա բնակավայրերի նշանակության հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 09-066-0012-0004-ից և 09-066-0012-0002-ից)՝ <<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ Նռնաձոր, 1-ին փողոց, 1-ին փակուղի թիվ 3/6>> հասցե.
2) 0,08906 հա բնակավայրերի նշանակության հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 09-066-0012-0008)՝<<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ Նռնաձոր, 1-ին փողոց, թիվ 5/8>> հասցե.
3) 0,06818 հա բնակավայրերի նշանակության հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 09-066-0011-ից)՝ <<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ Նռնաձոր, 1-ին փողոց, 3-րդ փակուղի թիվ 11/12>> հասցե.
4) 0,15112 հա բնակավայրերի նշանակության հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 09-066-0012-0019)՝ <<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ Նռնաձոր, 1-ին փողոց, թիվ 23/9>> հասցե.
5) 0,03566 հա բնակավայրերի նշանակության հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 09-066-0012-0017)՝<<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ Նռնաձոր, 1-ին փողոց, թիվ 23/7>> հասցե.
6) 0,20516 հա բնակավայրերի նշանակության հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 09-066-0014-0002 և 09-066-0014-0003)՝ <<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ Նռնաձոր, 1-ին փողոց, 4-րդ փակուղի թիվ 2/2>> հասցե.
7)0,25699 հա բնակավայրերի նշանակության հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 09-066-0009-0060 և 09-066-0009-0058-ից)՝ <<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ Նռնաձոր, 1-ին փողոց, 4-րդ փակուղի թիվ 2/3>> հասցե.

8) 0,33057 հա բնակավայրերի նշանակության հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 09-066-0009-0050)՝<<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ. Նռնաձոր, 1-ին փողոց, 2-րդ փակուղ թիվ 4/2>> հասցե.

9)0,17877 հա բնակավայրերի նշանակության հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 09-066-0009-0049-ից և 09-066-0009-0050-ից)՝<<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք,գ. Նռնաձոր 1-ին փողոց,2-րդ փակուղի թիվ 4/3>>հասցե.

10)0,2755 հա բնակավայրերի նշանակության հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 09-066-0009-0001-ից)՝<<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ. Նռնաձոր, 1-ին փողոց թիվ 9/6>> հասցե.

2.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ**

**2019թ օգոստոսի 20**
**ք.Մեղրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

**Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք**
**ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00,**
**meghri.syuniq@mta.gov.am**

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 օգոստոսի 2019թվականի N 329

### ԱՆԻԿ ՕՆԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 523, N 524, N 525 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով,Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N631-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 16 -ի թիվ 5 արձանագրությունը և Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Չարենց փողոցի շենք 3, բնակարան 5 հասցեի բնակիչ Անիկ Օնիկի Վարդանյանի դիմումը (մուտք՝ 2019 թվականի հուլիսի 31-ի N Ք-3048), որով հայտնել է, որ անչափահասներ Մերի Փարսադանի Փարսադանյանը, Գոռ Փարսադանի Փարսադանյանը և Գևորգ Փարսադանի Փարսադանյանը վերադարձվել են հոր՝ Փարսադան Էրիկի Փարսադանյանի խնամքին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Անչափահասներ Մերի Փարսադանի Փարսադանյանի,Գոռ Փարսադանի Փարսադանյանի հոգաբարձու Անիկ Օնիկի Վարդանյանին ազատել հոգաբարձուի պարտականությունների կատարումից:
2.Անչափահաս Գևորգ Փարսադանի Փարսադանյանի խնամակալ Անիկ Օնիկի Վարդանյանին ազատել խնամակալի պարտականությունների կատարումից:
3.Ուժը կորցրած ճանաչել Մեղրի համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N523, N524, N525 որոշումները:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ**

**2019 թ.օգոստոսի 21**
**ք.Մեղրի**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 օգոստոսի 2019 թվականի N 330

### ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏՐՈՆ(ՕԳՆԱԿԱՆ)ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N631-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Հասմիկ Խաչատրյանի 2019 թվականի օգոստոսի 6-ի N3098 դիմումը և Սաթենիկ Շիմշադյանի համաձայնությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մեղրի քաղաքի Կառուցողների փողոց, տուն 38 հասցեի բնակչուհի Հասմիկ Հովհաննեսի Խաչատրյանը վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնել ու պաշտպանել իր իրավունքներն ու կատարել պարտականությունները, ինչպես նաև Մեղրի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 16-ի թիվ 5 նիստի արձանագրությունը

որոշում եմ՝

1.Հասմիկ Հովհաննեսի Խաչատրյանի (ծնված՝ 00.00.1928թ.) նկատմամբ սահմանել պատրոնաժ և պատրոն (օգնական) նշանակել դստերը՝ Սաթենիկ Գրիգորիի Շիմշադյանին (ծնված՝ 03.12.1960թ.):
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 21
ք. Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

**Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք**
**ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00,**
**meghri.syuniq@mta.gov.am**

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 օգոստոսի 2019թվականի N 331

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N25 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» N 390-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի 2019 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի 2019 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» N25 որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Մեղրի համայնքի ղեկավարը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ**

**2019թ.օգոստոսի 21**
**ք.Մեղրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00, meghri.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 օգոստոսի 2019թվականի N 332**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Իսկուհի Լևոնի Փեցյանի (ծնված՝ 14.09.1946թ. դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Մրգանուշ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող բնակելի տանը ամրակայված հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0,0436 հա, որից 0,0406 հա մակերեսով հողամասը Իսկուհի Լևոնի Փեցյանին սեփականության իրավունքով պատկանող հողամաս է: Օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.003 հա հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել Իսկուհի Լևոնի Փեցյանին՝ որպես անհատույց սեփականություն

Հաշվի առնելով, որ բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված պահանջներին, չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 2008 թվականի հունիսի 10-ի «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՕ- 117-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով.

որոշում եմ՝

1.Վերականգնել Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Մրգանուշ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող, Իսկուհի Լևոնի Փեցյանի սեփականությունը հանդիսացող բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0,0406 հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.003 հա հողամասի հողհատկացման հիմքերը, ճանաչելով նրա սեփականության իրավունքը հողամասի նկատմամբ:
2.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ**

2019 թ. օգոստոսի 21
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

**Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք**
**ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00, meghri.syuniq@mta.gov.am**

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 օգոստոսի 2019թվականի N 233

## «ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 8-րդ հոդվածով, 9-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 61-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ստեղծել «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Վարդանիձորի մասնաճյուղ:

2.Սահմանել, որ «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Վարդանիձորի մասնաճյուղի գործունեության առարկան ու նպատակը ՀՀ Սյունիքի մարզի Վարդանիձոր գյուղում նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:

3.Մեղրի համայնքի մանկապարտեզի տնօրեն Սյուզան Սարգսյանին՝ դիմել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժին՝ օրենքով սահմանված կարգով մասնաճյուղը հաշվառելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 21
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00,
meghri.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 օգոստոսի 2019թվականի N 334

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Փարամազի փողոցում գտնվող 21.1 քմ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցը համապատասխանում է հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին,ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Փարամազի փողոցում գտնվող 0,00211 հա բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 21.1 քմ մակերեսով ավտոտնակը դիտել որպես 1 (մեկ) միավոր և տրամադրել՝ <<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, քաղաք Մեղրի, Փարամազի փողոց թիվ 15/50>> հասցե:

2.ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի քաղաք Մեղրի,Փարամազի փողոցի թիվ 15/50 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված 21.1 քմ մակերեսով ինքնակամ շինությունը (ավտոտնակը) համարել Մեղրի համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
3.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի պետի վրա:
5.Որոշման կատարման վերահսկողությունը դնել Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

**2019թ. օգոստոսի 22**
**ք.Մեղրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 օգոստոսի 2019 թվականի N 335

## ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարին ուղղած 2019 թվականի օգոստոսի 21-ի N 3336 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ Մեղրի համայնք գյուղ Ալվանքում գտնվող, Իսմաիլ Ագապարոնի Ավակյանին, Լուսիկ Արշակի Ավակյանին, Սվետլանա Իսմաիլի Կագրիյանին, Սամվել Իսմաիլի Ավագյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասերին տրամադրել՝

1)09-009-0008-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության 0,083 հա մակերեսով հողամասին՝ «Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ.Ալվանք, 2-րդ փողոց,թիվ 13/6» հասցե.

2)09-009-0015-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության 0,006 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասին՝ «Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ.Ալվանք, 2-րդ փողոց,թիվ 10/2» հասցե:

2.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 22
ք. Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

**Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք**
**ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00,**
**meghri.syuniq@mta.gov.am**

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 օգոստոսի 2019թվականի N 236

## ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Շուշանիկ Վահանի Ծատրյանին՝ համայնքի ղեկավարին ուղղած 2019 թվականի օգոստոսի 22-ի N 3344 դիմումը՝

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող, Շուշանիկ Վահանի Ծատրյանին ժառանգության իրավունքով պատկանող ( ժառանգության վկայականը տրված՝ 22.08.2019թ., սեղանամատյանում գրանցված 980-ով) հողամասերին տրամադրել՝

1)09-005-0037-0007 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության 0,11 հա մակերեսով հողամասին՝ «Սյունիքի մարզ, Մեղրի համայնք,ք.Մեղրի,Մրգանուշ փողոց,թիվ 18/10» հասցե.

2)09-005-0304-0074 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության 0,02 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասին՝ «Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ.Լեհվազ,Լիճքվազ թաղամաս, թիվ 4/74» հասցե:

2.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շուշանիկ Վահանի Ծատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ**

2019թ. օգոստոսի22
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

**Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք**
**ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00,**
**meghri.syuniq@mta.gov.am**

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 օգոստոսի 2019թվականի N 237

### ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մաս 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հովսեփ Սարգսի Մարգարյանի՝ համայնքի ղեկավարին ուղղած 2019 թվականի օգոստոսի 21-ի N 3331 դիմումը՝

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող,Հովսեփ Սարգսի Մարգարյանին ժառանգության իրավունքով պատկանող ( ժառանգության վկայականը տրված՝ 21.08.2019թ., սեղանամատյանում գրանցված 972-ով) հողամասերին տրամադրել՝
1)09-039-0022-0011 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության 0,02 հա մակերեսով հողամասին՝ «Սյունիքի մարզ, Մեղրի համայնք,գ.Լիճք,1-ին փողոց,3-րդ փակուղի թիվ 2/11» հասցե.
2)09-039-0009-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության 0,083 հա մակերեսով հողամասին՝ «Սյունիքի մարզ, Մեղրի համայնք,գ.Լիճք,1-ին փողոց,թիվ 40/9» հասցե.
3)09-039-0013-0024 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության 0,045 հա մակերեսով հողամասին՝ «Սյունիքի մարզ, Մեղրի համայնք,գ.Լիճք,3-րդ փողոց ,թիվ 74/4» հասցե:
2.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովսեփ Սարգսի Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ**

**2019 թ.օգոստոսի 23**
**ք.Մեղրի**